ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№_____ «_____» _____ 202 թ.

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 78-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի 2022 թվականի հունվարի 19-ի հ.181-Ա որոշման 8-րդ հավելվածը (աղյուսակ 1), ինչպես նաև «Նուբարաշեն» ՓԲԸ-ի լուծարային հանձնաժողովի նախագահի 25.07.2022թ. հ.Ն-16616-22 գրությունը.

1.Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետին՝ Երևան քաղաքի 2022 թվականի բյուջեով Երևանի քաղաքապետարանի (առանց Երևանի վարչական շրջանների) մասով բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 04 բաժնի 09 խմբի 01 դասի «04. Աջակցություն համայնքային և ոչ համայնքային կազմակերպությունների ծրագրերին» ծրագրով և տնտեսագիտական դասակարգման «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» հոդվածով նախատեսված գումարներից «Նուբարաշեն» ՓԲԸ-ին հատկացնել 2393.0 (երկու միլիոն երեք հարյուր իննսուներեք) հազ. դրամ՝ ընկերության կրեդիտորական պարտավորությունների մարման և լուծարման գործընթացն ավարտելու նպատակով՝ լիազորելով կնքելու դրամաշնորհի հատկացման պայմանագիր:

2. Սույն կարգադրության կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետի վրա:

3. Կարգադրության կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Լ. Հովհաննիսյանի վրա:

X

ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Signed by: SARGSYAN HRACHYA 2302850092

ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ